ՆՈՐ-ԴԱՐ

№ 168 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 13 Հոկտեմբերի **1888** Հինգշաբթի 13 Հոկտեմբերի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 168

Տարեկան 10 ռուբլի, վեց ամիսը՝ 6 ռուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր. 50 կ., հատը՝ 5 կոպէկ։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Нор-Даръ»
կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ

WIEN NEUBAU 15 8 ZIEGLER

«Նոր-Դար»-ին ներկայ Հոկտեմբերի 1-ից բաժանորդ են գրւում և վճարում են 3 ր. 50 կ.։ Բաժանորդ գրուել ցանկացողները ուղարկում են բաժանորդագինը այս հասցէով՝ Тифлисъ, въ Редакцію газеты «Норъ-Даръ».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նորին Կայսերական Մեծութիւնները Թիօնէթում։
Քրոնիկոն.—Լուրեր։
Թղթակցութիւններ.—Գօրի. Նամակ Թիւրքիայից.—Կ. Պօլիս։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
Խառն Լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
Բանասիրական.—Գայլ-Վահան (շարունակ.)։
Յայտարարութիւններ։

ՆՈՅԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹԻՕՆԷԹՈՒՄ

Մի փոքրիկ հովտի մէջ, ուր արագավազ Խորա գետը միանում է Կուր գետի հետ, գտնւում է վրաց մի մեծ գիւղ՝ Թիօնէթ։ Հին եկեղեցին՝ վկայ սրանից 77 տարի առաջ պատահած Կախէթի ապստամբութեան, աւելի ևս հին բերդը, որը, ինչպէս ժողովրդական աւանդութիւնն պատմում է, շինուած է Թամար Թագուհու ձեռքով,—ահա նրա պատմական բոլոր նշանաւոր յուշարձանները։ Այդ հովտի խորքում, որ ամեն կողմից բարձրաբերձ ծառերով զարդարուած լեռնային շղթաներ են շուրջ փակած, բարձրանում է Խացըրի լեռը, որի վրայ է շինած Արքայական իջևանը։ Աւելի լաւ տեղ էլ կարելի չէր ընտրել։ Այդ բլուրը, որ կոչւում է այժմ «Արքայական բլուր», տիրում է Թիօնէթի հովտի վրայ և նրան երկու հաւասար մասերի է բաժանում՝—դէպի արևելք՝ Ստորին, իսկ դէպի արևմուտք՝ Վերին Թիօնէթ։ Երկու կողմերից էլ հարթութիւնը սահմանափակւած են բարձր լեռներով, որոնց վրայով անցնում են կեռ ու մեռ ճանապարհները։ Դէպի հիւսիս տեսարաններն աւելի ևս գեղեցիկ, աւելի ևս վեհապանծ են։ Ներքևում, Արքայական բլրի ստորոտում, Թիօնէթի կողմը, փռուած է զինուորական ընդարձակ դաշտը և նրա ետև՝ բանակը։ Դրագոնները, կուբանի և Թերէքի ղազախները, հետևակ և հեծեալ ումբաձիգ գնդերը գտնւում են Խորի ափին. այնուհետև Կուռնոլ նեղ ձորակում զետեղուած են կովկասեան գրենադերների գնդերը և այլն։

Խացըրի գագաթում, ուր շինուած է պալատը, երևում է այդ բոլոր բանակը։ Պալատի ճակատը դարձած է դէպի արևելք՝ Թիօնէթ և զինուորական դաշտը։ Արքայական վրանը, որ զարդարուած է բոյսերով, փայլում է գեղարուեստական պարզութեամբ։

Խեղճ Թիօնէթ գիւղը լցուած էր ժողովրդով, որ հաւաքուած էր բոլոր շրջակայ գիւղերից՝—Թագաւորին տեսնելու մտքով։ Հոկտեմբերի 5-ին Թիօնէթը և շրջակայ բոլոր բանակը զարդարուեցան անօրինակ պերճութեամբ։ Իւրաքանչիւր գունդ առանձին յաղթական կամար էր կառուցել. ամեն տեղ վրանները զարդարած էին պատկերներով, սկզբնատառերով և վերտառութիւններով; ամեն տեղ ծաղիկն և կանաչը կազմում են գեղեցիկ պսակներ և վրաններն միացնում են միմեանց, ամեն տեղ ծածանւում էին հազարաւոր դրօշակներ։ Ցերեկուայ ժամը մօտ 2-ին զօրքերը շարք կանգնեցան. ամեն տեղ ածում էին նուագածուներն և երգում երգիչները։ Թիօնէթի ժողովուրդը լցուած էր ամբողջ դաշտը։ Առաւօտից եղանակը մառախլապատ էր։ Ցուրտ էր և խոնաւ։ Բայց մինչև կէսօր եղանակը կամաց-կամաց պարզուեց։ Բոլորի աչքերը դարձած դէպի լեռնային անցքը, որտեղից պիտի գային Արքայական հիւրերը։ Ժամը ուղիղ 3 ին Ցինոնդալի կողմից երևաց Արքայական գնացքի երկար շարքը։ Առաջից, զէնքերի շաչիւնով, սպիտակ փափախներով և սպիտակ չերքէսկաներով, կարմիր բաշլըղով, արշաւում էին դաղստանցիները։ Յաղթական կամարի մօտ հեծեալ պահնորդները կանգ առան շարքով և Արքայական կառքը կանգ առաւ։ Թիօնէթի բանակի կառավարիչ, Կովկասեան I կորպուսի հրամանատար գեն.-լէյտենանտ Ճավճավաձէն Թագաւորին ընդունեց պատուաւոր ռապօրտով։ Այնուհետև անցնելով յաղթական կամարը, առաջ գնացին։ Լսուեց «ուրա»-ն։ Բոլոր գնդերն անցնելով, Թագաւորը անցաւ դէպի պալատ։ «Ուրա»-ն լսւում էր ամեն տեղ և արձագանք տալիս լեռների մէջ։ Պալատի մօտ կանգնած էր Երևանի գնդից պատուաւոր պահնորդ և հաւաքուած էին բարձր գեներալները։ Անցնելով պահնորդի առաջով և գեներալներին արժանացնելով ողջոյնի, Թագաւորը Թագուհու հետ մտաւ պալատի ներսը։ („Кав.")

ՔՐՈՆԻԿՈՆ

Հոկտեմբերի 10-ին, Վեհափառ Կաթողիկոսը այցելելով Ներսիսեան դպրանոցը, Գայիանեան և Յովնանեան-Մարիամեան և օ. Նշանի (Հայուհեաց Ընկերութեան օժանդակութեամբ պահպանուող) օրիորդական դպրոցները, գոհ է մնացել վերջին դպրոցներից։

Յովնանեան դպրոցի մի վարժուհի մի ճառ է խօսել, որ արժանացել է Նորին Վեհափառութեան շնորհակալութեան։

Գայիանեան դպրոցը երբև նուէր, մատուցել է Նորին Վեհափառութեան աշակերտուհիների պատրաստած մի ձեռագործ պատկեր Քրիստոսի, իսկ Հայուհեաց Ընկերութիւնը՝ մի ձեռագործ գեղեցիկ բարձ և մի սփռոց։

Հոկտեմբերի 11-ին, երեկոյեան ժամը 6-ին Հայուհեաց Ընկերութեան խորհրդի անդամները՝ թւով 12 հոգի, ներկայացան Նորին Վեհափառութեան։ Խորհրդի անդամներից մէկը խօսեց մի փոքրիկ ճառ։ Ճառախօս տիկինը բացատրելով Ընկերութեան նպատակը և արդի գրութիւնը, ցոյց տալով, որ ընկերութիւնը բարի մտաքեր ունի, բայց միջոցներ չունի նրանց իրագործելու, խնդրում էր Նորին Վեհափառութիւնից, որ Նա ցոյց տայ այդ ցանկալի միջոցները ձեռք բերելու ճանապարհը։

Այնուհետև ճառախօս տիկինը խնդրել է Նորին Վեհափառութիւնից Հայուհեաց Ընկերութեան օգտին եկեղեցիներում տափեր կախելու արտօնութիւն, և ցանկութիւն է յայտնել, որ քահանաները եկեղեցիներում Հայուհեաց Ընկերութեան օգտին քարոզներ խօսեն։

Տափերի մասին խնդիրքը մերժել է Վեհափառ Կաթողիկոսը, իսկ քարոզները բարեհաճութեամբ ընդունել է։ Այնուհետև պատուելի տիկինները թէյ ընդունելով մեկնել են առաջնորդարանից՝ արժանանալով Նորին Վեհափառութեան օրհնութեանը։

—

ՈՒՍՏՐԻՑ (Ամերիկայից) մեր թղթակիցը գրում է, որ այնտեղ՝ հայ գաղթականների թիւը գնալով աւելանում է. արդէն 500 հոգու չափ հայեր կան և շարունակ 5 և 10 հոգով աւելանում են Թիւրքիայից գալով, թէպէտև Բ. Դուռը գաղթելը արգելել և նրա դէմ արգելքներ սահմանել։ Ցաւալին այն է, որ գաղթողները մշակ և երկրագործ դասիցն են և Ամերիկա գալով յոյս ունին ոսկէ հանքեր գտնելու։ Քարբերդից եկող հայերն բոլորն էլ Ուստր են գալիս, կարծելով, որ Ամերիկան միայն Ուստրն է. չգիտեն, որ Ուստրի պէս և դրանից մեծ շատ քաղաքներ կան Ամերիկայում, ուր թէ շատ գործ կայ և թէ շատ փող։ Արդէն անգլիերէն չգիտնալ և Ամերիկա գալը մի թշուառութիւն է, որ գաղթող հայն միայն գիտէ։ Ինչպէս ողորմելի վիճակի մէջ են այստեղ գաղթող հայերից շատերը, պատմել կարելի չէ։ 150 հոգի գաղթական հայեր այսօր պարապ ընկած են, իսկ Նորեկները գալով շուարւում են տեսնելով իրականութեան մէջ այն, ինչ որ բոլորովին հակառակ է իրենց տեսած երազներին։ Այդպիսիների յուսախաբութեանը յաջորդում է յուսահատութիւն։ Դրանք սկսում են անիծել նրանց, որոնք պատճառ են դարձել գաղթելուն։

Մեր թղթակիցը հրաւիրում է Կ. Պօլսի Ազգային Ժողովի ուշադրութիւնը այս բանի վրայ և սպասում է, որ Նա գտնէ գաղթելու առաջն առնելու միջոցներ։ Բաւական չէ, որ Ուստր եկող հայ գաղթականները պարապ մնացած թշուառ կացութեան մէջ են, դեռ ծաղրի և անպատուութեան առարկայ են դառնում անպիտան հասարակ իռլանդացիներից, որոնք իբրև սրիկաներ յայտնի են Ամերիկայում և իրենց նմանը չունին։ Այդ սրիկաները անգործ հայ գաղթականներին հանդիպելով, ծաղրում են նրանց խեղճութիւնը և անգլիերէն լեզուի անգիտութիւնը և քարեր ձգելով խեղճ հայերին վիրաւորում են։ Զզւելի է, աւելացնում է մեր թղթակիցը, փողոցներում կան պահապաններ, բայց թշուառ հայ գաղթականները լեզու էլ չգիտեն, որ գանգատուեն և ոստիկանութեան օգնութեանը դիմեն։

—

Կիրակի, Հոկտեմբերի 9-ին Թիֆլիսից Ղարաբաղ ուղևորեցան իշ. կառավարչապետի օգնական գեն.-ադ. Շէրէմետևը և Թիֆլիսի փոխ-նահանգապետ իշ. Շերվաշիձէն։

—

ՓՕԹԻԻՑ.—Այստեղի Նորընծայ արժ. Խուցեանց քահանայի նախաձեռնութեամբ ներկայումս աշխատում են բանալ այստեղ մի ծխական դպրոց։ Այդ քահանան յանձն է առել մի տարի ձրի դաս տալ բացուելիք դպրոցում, իսկ տեղիս քաղաքացի պ. Յովհաննէս Պետրոսեանը յանձն է առել իւր հաշուով գնել դպրոցին հարկաւոր կահ-կարասիքը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՅԼ-ՎԱՀԱՆ *)

(Պատմական վէպակ)

—

Բայց և Վահան իշխանը պարապ չէր նստում. նա ևս իւր բանակով եկել էր Վաշէի դէմ, որ նրան թոյլ չտայ երկրի ներսը մտնելու։ Երկու բանակները հանդիպեցին Տարօնի հիւսիս-արևելեան կողմը, Կոթ-ձորի բլրի ստորոտներում։

Վահան Մամիկոնեանի հետ միացել էին Հաշտենից Սմբատ իշխանը իւր Վահան որդու հետ 3000 մարդով, Պալունեաց Վարազ իշխանն ու Սմբատ որդու հետ 1000 մարդով, Եղնուտի տէրը 2000 մարդով. իսկ ինքը Մամիկոնեան Վահան իշխանն իւր Սմբատ որդու հետ իւր ձեռքի տակ ունէր 10,000 մարդ։ Հայոց զօրքերի թիւը պակաս էր պարսից զօրքերի թւից, բայց դրա փոխանակ նրանք ամենքը վառուած էին մի սուրբ մտքով, այն է՝ չթողնել, որ պարսիկներն ոտնակոխ անեն իրենց երկիրը և քանդեն սուրբ եկեղեցիները։ Նրանք ամենքը պատրաստ էին մեռնել պատերազմի դաշտում, միայն թէ չտեսնեն իրենց երկիրը պարսից ձեռքին, այն ինչ պարսիկները մահից վախենում էին, և նրանցից շատերը հաւաքուել էին Վաշէի դրօշակի տակ աւար առնելու նպատակով միայն։

Վահանի բանակում էին և Ս. Կարապետի կրօնաւորները՝ թւով 385 հոգի։ Թոդիկ վանահայրը չէր կարող իւր կրօնաւորների հետ չմասնակցել այն պատերազմին, որ կատարւում էր հայրենիքի և հայրենի եկեղեցու պաշտպանութեան համար. նա չէր կարող իւր և իւր կրօնաւորների օրինակով չխրախուսել հայերին, որ քաջութեամբ մեռնեն։ Պակաս էր միայն Արջուց իշխանը. բայց երեկոյեան, երբ արդէն մութը տիրել էր դաշտին, և երկու բանակները դէմուդէմ սպասում էին լուսաբացին, որ կռիւն սկսեն, յանկարծ յայտնուեցաւ և Արջուց իշխանն իւր գնդով։ Նրա գալուստն ընդհանուր ուրախութիւն պատճառեց հայերին, և Վահան իշխանը, որ երբեք չէր սպասում, թէ նա իրենց օգնութեան կը գայ, մոռանալով իւր թշնամութիւնը նրա դէմ, համբուրուեցաւ նրա հետ և ասաց.

—Գորգ իշխան, ես մեղաւոր եմ, որ չէի սպասում մեր կռւում տեսնել ձեզ։

—Այո, իշխան, դու չէիր սպասում, բայց ես սպասում էի,—միթէ կարող էի հայրենիքի սուրբ կռուի համար չմոռանալ անցածը։ Ուրիշ բան է, եթէ դու քեզ համար կռւէիր. ինչու են ժողովուել այստեղ այսքան կտրիճներ, ինչու են եկել և մեր ս. կրօնաւորները,—ասաց Վահան իշխան,—միթէ եկել են, որ քեզ համար կռւեն, չէ՞ որ մեր անկախութեան և մեր եկեղեցու համար է։ Իսկ այդ երկուսն էլ միայն քեզ չեն պատկանում, ինձ էլ են պատկանում, ինչպէս և ամենքին, որ այստեղ հաւաքուած են մեռնելու և մեռցնելու։

Արջուց իշխանը մի յաղթանդամ տղամարդ էր, որ աւելի հսկայի էր նմանում։ Երբ նա խօսում էր, նրա երկնագոյն, խոշոր աչքերը պտտւում էին գալիս չորս կողմը հաւաքուած բազմութեան վրայ, որ յափշտակուած լսում էր նրան։ Նրա ճակատը լայն էր, բայց երկայն խարտեաշ մազերը շատ անգամ ցրուած ծածկում էին ճակատը։ Աւելի նշանաւոր էին նրա երկայն ընչացքները, որ նա միշտ ոլորած էր պահում, և շատ անգամ գովում էր, որովհետև նա այդ ընչացքները տղամարդութեան նշան էր համարում։ Առհասարակ նա սիրում էր շատ խօսել, ժողովուրդը նրան տուել էր Շատախօս մականունը,—բայց ինքն իշխանն էլ պակաս չէր սիրում այդ մականունը, դրա համար և պատուիրել էր Արջք գաւառն անուանեն Շատախօսի գաւառ, որ վերջը ժողովրդի բերնում աղաւաղութեամբ դարձել էր Շատախ։

—Իշխան, ես չէի սպասում, բայց Մուշեղ իշխանը միշտ սպասում էր,—շարունակեց Շատախօս Գորգի խօսքն ընդհատել Վահանը՝ տեսնելով, որ նրա խօսքին վերջ չկայ,—բայց այժմ խնդիր է, թէ պատերազմը երբ սկըսենք. իմ կարծիքով հենց այժմ գիշերով յարձակում գործենք, քանի որ մեր մարդկանց մէջ ընդհանուր ոգևորութիւն է տիրում։

—Ինչու այժմ, դարձրեց խօսքն Գորգը, քանի որ ես հաւատացած եմ, որ յաղթութիւնը մերն է։ Աւելի լաւ է առաւօտեան լոյսով կռւենք, որ տեսնենք, թէ ինչ տեսակ արարածների հետ գործ ունենք,—պէտք չէ խաւարի մէջ խարխափել։

—Ճշմարիտ է ասում Գորգ իշխանը, շարունակեց Թոդիկ վանահայրը, խօսքը խլելով Շատախօսի բերնից,—ասած է. «լոյսն է բարին», ուստի և աւելի լաւ է լոյսով կռւենք, մանաւանդ որ պէտք է շատերին վերջին անգամ հաղորդել Տիրոջ կենարար ս.

---

*) Տես «Նոր-Դար» № 167.

Այս առթիւ պիտի ասենք, որ այս տեղի Հայ գաղթականութիւնը թւով սակաւ լինելով, քահանան ժամօցից և ծիսակատարութիւններից կարող չէ այնքան եկամուտ ունենալ, որ Հոգայ իւր և իւր ընտանիքի Համար Հարկաւոր ապրուստը։

Հարկաւոր է, որ փօթիի Հայ Համայնքը օժանդակութիւն տայ իւր ծխատէր քահանային։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը ֆինանսների մինիստրութեան Հետ բանակցութիւն է սկսել Թիֆլիսում, «Гражд.»-ի ասելով, խելագարների Համար առանձին ապաստանարան կառուցանելու նպատակով։

—

Միջին-ասիական ազգերից եկած պատգամաւորներին Թագաւոր կայսրը ամենաողորմածաբար պարգևատրել է՝—Նուր-Վերդի-խանի այրի Գիւլ-Ջամալ-բային ոսկեայ երկու ապարանջան փիրուզայով զարդարած, և նոյնպէս մի գնդիկ փիրուզայով և մարգարտով զարդարած. Թուրքմէնեան միլիցիայի սպաներին և Թարգման Էֆֆէնդիեվին—թանկագին մատանիներ, 20 Հոգու պատուաւոր խալաթներ, իսկ մնացածներին ժամացոյցներ։

—

ԱՐԴԱԲԻԼԻՑ (Պարսկաստան).—Անցեալ օգոստոսի 25-ին, տեղիս ուսումնարանի Համար կայացած ժողովում, ուր ներկայ էին գրեթէ տեղիս բոլոր Հայերը, ընտրուեցաւ երեք Հոգաբարձու, ուսուցիչ եղաւ մեր նախկին ուսուցիչը տարեկան 60 թուման ռոճիկով. ռուսաց լեզուագիտով 200 րուբ.։ Հոգաբարձուները գործօն մարդիկ լինելով, Հենց և օրը սկսեցին Հաւաքել իւրաքանչիւրից իւր կարողութեան Համեմատ, և երկու օրում Հաւաքեցին 180 թուման (600 ր.)։ Երիտասարդներն էլ իրենց մէջ մի թերթ պատրաստեցին և Հաւաքեցին ուսումնարանի օգտին 20 թուման (60 ր.)։ Հոգաբարձուները ստորագրութեան թերթը տարան դատաւորի, սարթիպի (զօրքերի մեծը) և ոստիկանապետի մօտ, սրանցից էլ առին 40 թուման (120 ր.)։

Ուսումնարանի սենեակները, որոնք բոլորովին փչացել էին, նորընտիր Հոգաբարձուները սկսեցին նորոգել, գրասեղանները, որոնք դուրս մնալով ջարդուել և փչացել էին բացօթեայ մնալով, շինեցին և սեպ. 1-ին քահանան Հոգաբարձուների և այլ Հիւրերի ներկայութեամբ ուսումնարանի բացումը օրհնելով պատրաստութիւնը սկսուեցաւ։

Առ այժմս աշակերտների թիւը 20 է. Սովորեցնում են Հայերէն և ռուսերէն լեզուները, ուզում են, որ պարսկերէն էլ դաս տան։ Այստեղից կը տեսնէք, որ մանկավարժական ուղղութիւն չունի ուսումնարանը։ Միտք կայ աղջիկների Համար էլ մի դպրոց բանալու։

Թուրքերը ամբողջ 15 օր փողոցներում ման գալուց և իրենց մերկ մարմինների շղթայով խփելուց յետոյ, սեպտ. 5-ին գլուխները ճղեցին ի յիշատակ 73 իմամների, որոնց սպանել էր այդ օրը Օմարը։

Գլուխները ճղած խումբերով թուրքերը ման են գալիս փողոցներում. ամեն մի խումբը պատկանում է կամ մի մեծ մարդի, կամ մի թաղի և իւրաքանչիւրը դրանցից կամենալով միւսից գերազանցել շքեղութեամբ, ոսկիներով և արծաթներով ձիեր են զարդարում, ուղտեր են բերում բարձած տան կահ կարասիքով և ամեն մինի վրայ մի կամ երկու գերի, և այդ գերիները սևեր Հագած գնում են։ Սրանք ներկայացնում են այն իմամների ընտանիքն, որոնց Օմարը սպանելուց յետ տանում էր գերի։

Խումբերի առաջից տանում են դրօշակներ, որոնց Հետևում են ուղտերը և ձիերը, ետևից գնում է խումբը. մի քանիսը երգում են և ամբողջ խումբը կրկնելով երգի վերջը, սկսում են ամենքը սաստիկ կերպով խփել սրտներին. դրանց Հետևում են գլուխ ճղածները սպիտակ շորեր Հագած և ամեն մինի ձեռքում մի սուր բռնած շախսէյ-վախսէյ, Հասան Հուսէյն կանչելով. այնուՀետև գալիս են շղթայ խփողները բոլորովին մերկ, ամեն մէկը մի փունջ երկաթի շղթաներ ձեռքներին խփում են իրենց մէջքերին. խումբի առաջ գնում է գլխաւորը և կարգադրութիւն անում և զգուշացնում, որպէս զի չՀանդիպեն ուրիշ խմբի, եթէ ոչ սաստիկ կռիւ է լինում. այդ օրը ով ում սպանի, ոչ ոք խօսք չի ասի։

Սովորութիւն կայ, որ խումբերը ման գալուց յետոյ գնում են դատաւորի մօտ և նրանից պահանջմամբ երկու-երեք բանտարկուածներ առնում ազատում են։ Մեր ներկայ դատաւորը չկամենալով ազատութիւն տալ մի որև է բանտարկեալի, որ առաջ փակել է տալիս բերդի բոլոր դռները և ինքը գնում գիւղ՝ բերդի բոլորտիքը զինուած զինուորներ դնելով, որ անկարգութիւն չպատահի։ Որովհետև այդ կրօնական տօներին տանիքները լցուած են լինում «թամաշաչիներով», դրա Համար այլ տեսակ թշուառ դէպքեր էլ չեն պակասում։ Այս անգամ մի կին տանիքից փողոցն ընկաւ իւր երկու երեխաներով. երեխաները տեղն ու տեղը Հոգին աւանդեցին, իսկ մօր գլուխը պատառուեցաւ։ Խօսքս մաՀմեդական տների մասին լինելով, աւելորդ չեմ Համարում Հաղորդելու այստեղի Մուշտէյիդի մաՀը, որ տեղի ունեցաւ սեպտ. 6-ին։ Նրան թաղեցին մեծ փառքով. ՄաՀմեդական թաղումներ չէք տեսել։ Այստեղ մթերքների շատ էժանութիւն է, միայն փող չկայ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՂԱՐՍ, 28 սեպտ.—Ռուսաց տիրապետութիւնից առաջ տեղս գտնւում էին մօտ 130 տուն Հայեր, որոնք զուրկ էին մի որև է ազգային Հաստատութիւնից։ Նրանց ունեցածն էր մի եկեղեցի և մի խալխիփալական ուսումնարան։ 1878-ից սկսած զանազան քաղաքներից Հայեր եկան Ղարս բնակութիւն Հաստատեցին. այժմ մօտ 1,000 տուն կը լինին Հայերը։ Ցաւալի է, որ այդքան Հայեր, մինչ օրս, բացի ուսումնարանից և ոչ մի Հաստատութեան—նոյն իսկ մի որև է աղքատանոցի մասին Հոգացած չեն։

Ամեն օր անխտիր՝ եկեղեցու առաջ շարւում են աղքատներ թէ կին, մինչև իսկ չափահաս աղջիկներ. ժամասացութիւնից յետոյ, օր ցերեկով, նրանք խանութից խանութ ման գալով ողորմութիւն են Հաւաքում մի կերպ ապրելու Համար։ Եթէ մէկը, այդ աղքատ կանանց կամ աղջկանց մի կոպէկ է շնորհում, Հազար ու մէկ տրտունջներ է անում, առանց այն էլ աղքատի վիրաւոր սիրտը կրկին վիրաւորում։

Բայց ժողովրդին էլ չի կարելի մեղադրել, որովհետև ամեն օր է լինում այդ գայթակղեցուցիչ տեսարանը. Ահա մէկը, ոտքերը բոբիկ, Հագուստը Հազար տեղերից պատռուած, գրեթէ մերկ, միւսը անդամալոյծ, որին շալակով ման են ածում, երրորդը կոյր և այլն և այլն։

Ճշմարիտ, այս ամենն անտանելի տեսարաններ են. մարդ սարսռում է տեսնելով սրանց, որոնցից ոմանք անկարող են մինչև իսկ մուրալու։ Մինչև երբ պէտք է այս դրութիւնը շարունակուի և ո՞վ պէտք է այս թշուառների կացութիւնը գէթ մի փոքր թեթևացնէ։

Միթէ ժամանակ չէ՞ վերջ տալու այդ գայթակղեցուցիչ երևոյթներին. միթէ մեր մէջ ամեն բարի զգացում Հանգել է, միթէ միջոցից զուրկ ենք. Ո՛չ, ոչ. առատ աղբիւրներ կան մեր քաղաքի աղքատներին օգնելու և նրանց ապրելու միջոց տալու Համար։

Հազարից մէկը.

Մեզանում սովորութիւն կայ, որ շաբաթ կամ կիրակի օրերը, երկու մարդ միասին թաղէթաղ են ման ածում —ժողովք անում այս և այն աղքատի Համար, գոյացած գումարը յանձնում են որի օգտին որ է (ժողովք անողների ժողովրդականութիւնից է կախուած գումարի որքանութիւնը)։ Այսպէս, ամսոյս 18-ին, կիրակի օրը, Հինգ առանձին ժողովք անողներ կային զանազան աղքատների օգտին, որոնցից երկուսին ում պատկանելը իմացայ. Առաջինը պատկանում էր մի կոյրի, որի Համար Հանգանակուած էր 19 րուբ. 2 կոպ., իսկ երկրորդը՝ դատարկապորտ մի կաղկաղ երիտասարդի Համար. Հանգանակուած էր 15 րուբ. 25 կոպ.։ Առաջինը իւր նպատակին ծառայեց, որ միջոց տուեց ողորմելուն ապրելու. իսկ վերջինս նոյն օրը «Կարսակի դաշ» (մի պարտէզ է քաղաքից դուրս) գնալով, բոլորը գարեջրի և գինու փոխարկեց. Մնացեալ երեքը չիմացայ գինու ծառայեցին, թէ նպատակին։

Ահա այսպէս մենք չունենալով աղքատանոց կամ որ և է բարենպատակ Հաստատութիւն, շատ անգամ ժողովրդի տուածները իզուր են կորչում և անպաշտպան Շատերը աղքատութիւնից, անօթութիւնից են տանջւում, չգիտենալով թէ ում դիմեն, իսկ շատերը ողորմութեան անունով գինու փող են խնդրում (խօսքս բացառական է)։ Շաբաթական առնուազն 100 րուբլի է Հաւաքւում ժողովքներից աղքատների օգտին, բայց այդ մի քանի անՀատի Համար է լինում։ Այն ինչ քաղաքիս ետ ընկած անկիւններում կան այնպիսի ողորմելիներ, որոնց Համար և ոչ մէկ կոպէկ ողորմութիւն չէ Հասած. պատճառը, ինչպէս վերև ասացինք, կիսուոր են և ոչ ոքին չեն ճանաչում, որ նրա միջոցով փող Հաւաքեն։ Բացայայտ է, որ սրանք քաղցածութիւնից չմեռնելու Համար՝ դռնից դուռ, խանութից խանութ շրջում են, ողորմութիւն խնդրելով. Ի դէպ է ասել Թուրքական առածը—«բիրի եանար, բիրի գանար». մէկը անկիւնում քաղցից մեռնում է, միւսը ժողովրդի Հաշուով գինի է կոնծում։

Եթէ ցանկալի է այդ անՀատատութեան առաջն առնել և փողոցներից կտրել աղքատների ոտքը, անՀրաժեշտ է անյապաղ Աղքատների կանոն (Ալէքսանդրապոլում գտնուածի կազմակերպութեամբ) Հաստատել, որ՝ ժողովրդի տուած առատ նուէրները ամեն շաբաթ օր բաժանուի Հաւասարապէս վիճակաւ աղքատներին, նրանց, որոնք տկար են և անկարող իրենց ապրուստը Հայթայթելու և նրանց, որոնք ամօթխած են, մուրալ չեն կարող։ Այդպիսով երկու բարիք արած կը լինենք. առաջինը որ՝ կարող գործելու սակայն ծոյլ մարդիկ կ՚ստիպուին աշխատելու, որ իրենց օրեկան պաՀէնը Հայթայթեն, իսկ երկրորդը՝ իսկապէս աղքատները կստանան Հաւասարապէս մի պատառ սև Հաց։

Ժողովուրդը երբէք չէ խնայում իւր սև կոպէկը աղքատին օգնելու Համար, միայն թէ Հաւասարապէս ու արդարութեամբ բաժանելու ձեռնՀաս չէ. Ուստի շատ ցանկալի էր, որ բարի Հայեր այդ գործին գլուխ անցնէին՝ աղքատների կանոն Հաստատելու Համար։

Տեղիս Հոգևոր կառավարութիւնը —Հոգաբարձութիւնը, շատ և շատ բարենպատակ գործերում առաջնորդ է Հանդիսացել. յուսանք, որ սրանում ևս նա իւր ազդեցութիւնն ի գործ կը դնէ։

Ամեն բան ունենք, միայն Հարկաւոր է բարի և Հաստատ կամք։

Ն.

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. ՊՈԼԻՍ, 4 Հոկտեմբերի («Նոր-Դար»-ի թղթակցից).—Հակառակ ամենայն Հաւանականութեանց, ոչ Բարթուղիմէոս և ոչ Նար-Պէյ չկրցան պատրիարք ընտրուել, այլ Ազգ. ժողովոյ Հինգշաբթի առաւօտ դռնբաց նիստին մէջ 66 երեսփոխանաց քուէով Կ. Պօլսոյ Հայոց պատրիարք ընտրուեցաւ Խորէն եպիսկոպոս Աշըգեան՝ Արմաշու վանքին վանաՀայրը. գործին զարգանալը տեղեակ չեղող անձինք շատ պիտի զարմանան թէ ինչպէս կըլլայ, որ Համեմատականի մնացած երկու եպիսկոպոսունք՝ Բարթուղիմէոս 39 քուէով և Խորէն Նար-Պէյ 36 քուէով չեն կրնար պատրիարք ընտրուիլ. և այսպէս Արմաշու վանաՀայրը առաջին քուէարկութեան մէջ սոսկ և մէկ քուէ ստանալէ վերջ, այս երկրորդ քուէարկութեամբ 66 կը ստանայ և պատրիարք կըլլայ. աՀաւասիկ մենք այսպէս Հրաշք կը գործենք, և քարերէն ԱբրաՀամու զաւակներ կը յարուցանենք։

մարմինը։

ՎաՀան Մամիկոնեանը ոչինչ Հակառակ չէր կարող ասել Թոգլի վերջին խօսքերին, ուստի և որոշուեցաւ կռւին առաւօտեան սկսել։

ԺԵ.

Լուսնի եղջիւրը վաղուց մայր էր մտել. սաստիկ մթին գիշեր էր։ Այն ինչ պարսից բանակի մէջ մեծ աղմուկ էր իշխում. նրանք, վստաՀ իրենց յաղթութեան վրայ, խումբ-խումբ ժողոված՝ անձնատուր էին եղած կերուխումի,—Հայոց բանակի վրայ տիրում էր ընդՀանուր լռութիւն։ Եթէ չլինէին մի քանի տեղ վառուած խարոյկները, որոնց լոյսի տակ երևում էին Հսկող պաՀապանները, և եթէ միրթ-միւթ չլսուէին աղօթքի ձայներ, մարդ կը կարծէր, թէ այդտեղ Հազարաւոր մարդ չկան Հաւաքուած։

Կրօնաւորները կազմել էին սուրբ սեղանը և պատարագ էին անում. Սեղանի առաջ դրած էին տասներկու թուր. Բոլոր իշխանները զօրքերի մեծ բազմութեամբ շրջապատել էին սեղանի շուրջը։ Պատարագը վերջացաւ։ Թոգլի վանաՀայրը ծունկ չոքեց սեղանի առաջ — չոքեցին և բազմութիւնը — և ձեռքերն երկինք բարձրացրած, սկսեց լալ և ասել.

—Զարթիր, տէր, վեր, եկ մեզ օգնութեան։ Ա՛խ, Տէր, մեր նախատինքը, տես թէ մեր թշնամին ինչպէս խրոխտացաւ մեզ վրայ և ասաց. Կ'աւերեմ ձեր տաճարները, որ Քո սուրբ անուան Համար են։ Դարձիր մեր նեղութեանը, մի թողնիր քո պաշտօնեաների անՀաւատների ձեռքն ընկնեն։ Քո ամենակարող աջը Հովանի պաՀիր մեր երկրին և եկեղեցուն և օրՀնիր Քո Հզօր աջով այս սրերը, որ սրանցով օրՀնուին մեր բոլոր ժողովրդի սրերը, և Քո Հրամանով յաղթենք անօրէն թշնամիներին։

Ամենքը կրկնեցին. «Տէր, Քո Հրամանով յաղթենք անօրէն թշնամիներին»։ Թոգլի վանաՀայրն օրՀնեց տասներկու թուրերը. Սեղանի շուրջը Հաւաքուած զօրքերի բազմութիւնը ցրուեցան իրենց տեղերը։ Ցրուեցան և կրօնաւորները՝ իրենց Հետ տանելով և մասնատուփերը, որ Հաղորդեն. կէս ժամից յետոյ լռեցին և աղօթքի վերջին մրմունջներն և ամբողջ բանակը խորին Հանգստի մէջ էր։

Մամիկոնեան Սմբատն ու Հաշտենից ՎաՀանը միայն դեռ Հանգիստ չէին. նրանք միասին միևնոյն վրանի մէջ էին և վրդովուած սպասում էին։

—Հիմայ ինչպէս որ լինի, կը գայ, ասաց ՎաՀանը դառնալով դէպի Սմբատը։

—Դժուար թէ այդպէս շուտ, կարճ պատասխանեց Սմբատը, չուզենալով խօսակցութիւնն երկարացնել։

Նա նորից ընկաւ մտածմունքների մէջ, որոնք նրա Համար շատ քաղցրութիւն ու դառնութիւն ունէին. Աննայից այդքան մօտիկ գտնուել և չը կարողանալ տեսնել նրան, չկարողանալ խօսել, առանց ժամանակ կորցնելու, մտնել Պարսից բանակը, կոտրել Հակառակորդին և ազատել իւր ցանկալուն,—այդ ծանր էր նրա Համար։ Մտածում էր նա այդ բանի մասին և միայն սպասում էր, Հաւատացած լինելով, որ շուտով պիտի ազատէր իւր Աննային, որովՀետև Պարէտը կամ Վարդը, որ պարսից բանակում էին, պիտի գային շուտով և միայն Աննայի տեղը յայտնէին նրանց։

Անցաւ մի ժամի չափ. կէս գիշերը վաղուց անց պիտի լինէր, բայց պարսից բանակի աղմուկը դեռ չէր դադարել. Վերջապէս ներս մտաւ Վարդը և ասաց.

—Ինչպէս պատուիրել էին տէրերս, գնացի. Պարէտը պարսից բանակումն է և միշտ տիկնոջ և օրիորդի վրանների մօտ է լինում. Նրանց վրայ պաՀապան նշանակուած է, մեծ խմբով, Ասուր անունով մէկը, որին Վաշիրը պատուիրել է մեծ զգուշութեամբ պաՀել գերուՀիներին։ Տիկնոջ և օրիորդի վրանը կարմիր գոյնով է, և գտնւում է բլրի ստորոտում, բանակի ետևի մասում. Գիշերուայ նշանաբառը «կռիւ» է.—Բայց, աւելացրեց Վարդը, եթէ իմ տէրերս ինձ կը լսեն, իրենց գլուխը վտանգի չեն ենթարկել, գիշերով չեն յարձակուել նրանց ազատելու Համար, որովՀետև վրանի շուրջը մեծ բազմութիւն կայ Հաւաքուած, որ դեռ կերուխումով է զբաղուած. Թող տէրերս սպասեն, որ վաղը կռուի ժամանակ ազատեն նրանց։

ՎաՀանն ու Սմբատը նայեցին միմեանց երեսին, իբրև թէ Հարցնելով. «Հենց այժմ գնանք ազատելու, թէ թողնենք վաղուան»։ Մի րոպէից յետոյ Սմբատն ասաց.

—Փորձենք այս գիշեր, գուցէ աջողուի։ Վարդ, իմաց տուր երկու ընկերներից, դու էլ պատրաստ եղիր մեզ Հետ գնալու,—Հինգս բաւական ենք։

(Կը շարունակուի)

Նախ պէտք է գիտնալ որ մեր մէջ կատարուած ընտրութիւնք գրեթէ մինչեւ 'ի նախատ այս ինչ կամ այն ինչ կուսակցութեան կը կատարուին, որպէս զի ընտրեալը պաշտօնի գլուխն անցնելուն պէս՝ իւր ընտրութեան օժանդակողներուն շահուն համաձայն լուծէ ամեն խնդիր. պատրիարքէ բռնէ ցյետին պաշտօնեայն (հազուագիւտ բացառութեամբ) ամենուն ալ ընտրութեան միջոցն այս է, և եթէ պատահի որ ընտրուած անձը ազգին ալ օգտակար կրնայ ըլլալ՝ այդ գիւտուածք բերմունք է, և ոչ թէ ընտրելոյ մը անհրաժեշտ հանգամանքը. Եւ ասոր համար է, որ մեր մէջ պաշտօնեայ չհինար այլ տարի մը տեւելէ վերջ կը կորսնցնէ իւր ոյժը, գոյնը դուրս կ'ուտայ և ամեն ոք կ'ելէ գժգոհութիւն յայտնել ընտրելոյն պաշտօնավարութենէն դէմ. մինչեւ իսկ զինքն ընտրողները, որ ամենայն ջերմութեամբ հազիւ յաջողեցնել կարող եղան, հետզհետէ կը զզջան և կսկծին թէ հրապարակաւ թէ գաղտնի քննադատել սարքեները: Այսչափ մը ըսելէ վերջ անցնինք ժողովոյ հինգշաբթի օրուան նիստին:

Պատրիարքական ընտրութեան մասին մէկ երկու ամիսէ ի վեր ինչ որ կը դառնայ արդէն գրած եմ ձեզ. և գիտէք որ Նար-Պէյ սրբազան հրաժարած էր պատրիարքութենէ (երբ տեսաւ որ չպիտի յաջողի ընտրութիւնը). սակայն խնդիր էր յուզուած ժողովոյ անցեալ նիստին մէջ թէ «քուէարկութեան սկսելէ վերջ եկած այսպիսի հրաժարական մը ընդունելի է թէ՞ ոչ, և թէ քուէարկութիւնը՝ համեմատականի մնացած Բարթուղիմէոսի և Նար-Պէյի վրայ կատարելու էր թէ, Նար-Պէյի անունը ջնջելով անկից անմիջապէս վերջը եկող Աշըգեանը անոր տեղն անցնելու էր. այս խնդրոյ և ծանօթ գանակոծութեան մը համար նիստը յետաձգուեցաւ այս հինգշաբթի ասուր սնալու. (29). ուստի Նար-Պէյի կուսակիցները տեսնելով, որ անկարելի է իրենց ընտրելին պատրիարքացնել՝ խմբովին կերթան ու Աշըգեաններուն հետ կը միանան. քանի մը «ամեն հովէ տատանող» երեսփոխանք ալ որ թէ այս և թէ այն կուսակցութեանն ալ խաբելով՝ գործին նպաստաւոր ելքը կսպասեն, որ երթան յարեն, Նար-Պէյեան և Աշըգեանները միացած տեսնալնուն պէս «խոստովանիմք և հաւատամք» ըսելով կերթան ու անոնք ալ Աշըգեանի դրօշակին տակ կը մտնեն. և այսպէս կրկնախօսքնեանք ժողովոյ մեծամասնութիւնը իրենց կողմն առած կուգան ժողովարանը պատգամները որոշելու, բատ որում ամեն մէկին քուէն կը տրնօրինէ և քուէներն ալ նոյն օր մեծաւ մասամբ իրենց են.

Առաւօտ բացուեցաւ ժամը 5-ին, ի ներկայութեան 84 երեսփոխանաց ընդ նախագահութեամբ Գեր. Ցեղ. սրբազան Հօր. Նախ անցեալ երկու նիստերու ատենագրութիւնները վաւերացուելէ վերջ՝ Ատենապետը ժողովոյ ներկայացուց Արդարութեան և Կրօնի նախարար վեհ. Ճէվտէթ փաշայի գրած մէկ թէզքէրէն ի մասին պատրիարքական ընտրութեան զոր կարդաց պատ. Թուրքերէն դիւանի պետ Կարապետ էֆ. Խաչատուրեան և որոյ թարգմանութիւնը կարդաց Ատենադպիր Միհրան էֆ. Մելիքեան. Թէզքէրէն՝ «Ժողովոյ անցեալ նիստին մէջ մի քանի խռովայոյզ անդամոց յարուցած աղմուկին և անկարգ մէջամտելուն առթիւ պատր. ընտրութիւն չկատարելուն ցաւ յայտնելով, կ'ազդարարէ որ այդպիսի անհաճ տեսարաններ կը կրկնուին, և թէ կառավարութիւնն արդէն հարկ եղած միջոցները ձեռք առած է խռովարարները պատժելու և ժողովոյ ազատութիւնը պաշտպանելու համար. իսկ պատրիարքական ընտրութիւնը պէտք է կատարել ըստ սրբամադրութեան սահմանադրութեան օրինաց, ընտրելով մի այնպիսի անձ՝ որ կառավարութեան ու ազգին վստահութիւնը գրաւած, հաւատարիմ և գործունեայ լինի և այլն»: Նախաբարական Թէզքէրէին մէջ էրմէնի միլլէթի (հայ ազգ) ըսելու տեղ էրմէնի ճէմաէթի (հայ ժողովուրդը) ըսուած էր քանիցս, որոյ դէմ Մարկոս էֆ. Ազարէկեան ըսաւ թէ՝ «Հայ ազգը ազգ է ու չէ թէ ժողովուրդ. ուստի պէտք է Հայոց համար էրմէնի միլլէթի ըսել և ոչ էրմէնի ճէմաէթի. սակայն Նուրեան Յովհ. էֆ. պատասխանելով ըսաւ թէ «Միլլէթ ու Ճէմաէթ» տաճկերէն համանիշ բառեր ըլլալով՝ միևնոյն նշանակութիւնն ունին և թէ կրօնի վսեմ. նախարարը մտաւոր գիտաւորմամբ մը չէ գործածած այդ բառերը». բայց ամեն ոք գիտէ որ «ազգ ու ժողովուրդ» տարբեր նշանակութիւն ունին: Այս կարճ գիտողութենէն անմիջապէս յետոյ, բեմն ելաւ վսեմ. Ստեփան փաշա Ասլանեան և հետեւեալ իմաստալից բանախօսութիւնը կարդաց *):

Անմիջապէս յետոյ ոտքի ելաւ վսեմ. Յ. Նուրեան էֆ. և երկարօրէն խօսեցաւ Նար-Պէյ սրբազանի հրաժարագրոյն մասին թէ՝ «երբ համեմատականի մնացին Բարթուղիմէոս և Նար-Պէյ սրբազանները՝ այս վերջինը ինձ (Նուրեանի) խորհուրդ հարցուց թէ ինչ ընթացք բռնելու եմ այս պարագայիս մէջ. ըսի որ ամենէն լաւ միջոցը հրաժարիլն է. հոն գրուեցաւ պարզ հրաժարագիր մը. սակայն ժողովոյ ներկայացուցուած հրաժարագիրը շատ կը տարբերի առաջին անգամ խմբագրուածէն. ինչ ալ որ ըլլայ այդ գիրը հրաժարական (սէմիսիօն) մը չէ, այլ պարզապէս ֆրանսերէն լեզուաւ (սէքսիւթըրման) նա քաշուիլ մ'է, որ անշուշտ համեմատականի մնացած միւս ընտրելւոյն ի նպաստ կրնայ համարուիլ. բայց քանի որ ժողովրդեան մէջ Տ. Բարթուղիմէոս սրբազանի և առաջին քուէարկութեան նկատմամբ դժգոհութիւններ ու անհամաձայնութիւններ կան, ինչու կաշկանդուած մնանք այլ եւս համեմատական քուէարկութեան մը շուրջը. կը խնդրեմ, կը հայցեմ վերջ տանք այս դժուարութեանց. թողունք համեմատականը և նոր ընտրութիւն կատարելով համաձայնենք այնպիսի չէզոք եկեղեցականի մը վրայ, որ ժողովոյս միաձայն հաւանութեամբն հռչակուի պատրիարք:

Նուրեան էֆէնտիէն վերջ բեմն ելաւ Ռեթէոս էֆ. Պէրպէրեան ու սկսաւ այսպէս խօսիլ. «Կը ցաւեմ որ հակառակութեան մէջ կ'իյնայ Նուրեան էֆ. երբ մէկ կողմէն գեր. Նար-Պէյ սրբազանի հրաժարականը ի նպաստ միւս ընտրելւոյն (Բարթուղիմէոս սրբազանի) կը մեկնէ, և միւս կողմէն կառաջարկէ բեկանել համեմատական ընտրութիւնը. եթէ Նար-Պէյ սրբազանի հրաժարականը ըստ քաղաքակրթեալ ազգաց օրինակի ի նպաստ միւս ընտրելւոյն պիտի նկատենք, ինչ հարկ կը մնայ այլ եւս ընտրութիւնը բեկանելով նորէն քուէարկութիւն կատարելու և գեր. Բարթուղիմէոս եպիսկոպոսի առաջին ընտրելիութեան իրաւունքը կասեցնելու. վսեմ. Ատենադպիր կ'ըսէ թէ՝ «ժողովրդեան և ազգին մէջ երկու կուսակցութիւնք կան և թէ ժողովրդեան մէկ մասը դէմ է Բարթուղիմէոս սրբազանի պատրիարքութեան, որ եթէ ընտրուի նոյն կուսակցութեան մը պատրիարք պիտի նկատուի. «ընդհակառակն, ժողովրդեան մեծամասնութիւնը համակիր է Բարթուղիմէոս սրբազանին և երեք չորս հարիւր անձնան խռովարարք ժողովրդեան ներկայացուցիչը չեն կրնար համարուիլ. ազգը երկու ներկայացուցիչ ունի մայրաքաղաքիս մէջ. մէկը համագումար եկեղեցական ժողովն, որ համայն եկեղեցականաց ներկայացուցիչն է, և միւսն ալ սոյն երեսփոխանական ժողովը, որ ժողովրդեան քուէովն ընտրուած ազգին օրինաւոր ներկայացուցիչն է. ուստի ապաքէն սոյն երկու ժողովներն ալ ջերմ փափագող գտնուեցան Պոլսոյ առաջնորդին պատրիարք ընտրուելուն. առաջինը իւր ցանկին գլուխը դրաւ զնորին սրբազնութիւն և երկրորդն ալ նոյն համեմատութեամբ քուէ տալով առաջին ընտրելի համարեց. արդ այլ եւս միութեան յանգելու ուրիշ գործնական միջոց չկայ, եթէ ոչ Նար-Պէյ սրբազանի կուսակցաց եւս Բարթուղիմէոս սրբազանի վրայ միանալ. գալով Նար-Պէյ սրբազանի, նորին սրբազնութեան հրաժարագրոյն մէջ ընտրելիութենէ հրաժարելու խօսք չկայ. այլ փոքրիկ կուսակցութենէ մը միայն ընտրուած ըլլալուն համար նա կը քաշուի. ու եթէ այս անգամ մեծամասնութենէ մը ընտրուի, անշուշտ է որ չհրաժարելով պիտի ընդունի պատրիարքութիւնը. արդ ոչ ոք իրաւունք ունի մէ զՆար-Պէյ սրբազան այս յոյսէն զրկելու և ոչ չհրաժարող Բարթուղիմէոս սրբազանի առաջնութեան իրաւունքը կասեցնելով հրաժարեալ համարելու, որոյ գործադրութիւնը մեծ պատասխանատուութիւն կը հրաւիրէ ժողովոյս վրայ»:

Պէրպէրեան էֆ.-ի այս ատենաբանութիւնը քանիցս ընդհատուեցաւ և զօր լռեցնելու պէս, Գեր. Ցեղապահ սրբազանը իւր հիւանդութեան պատճառաւ մեկնեցաւ ժողովասրահէն:

Ասկից վերջ բեմն ելաւ Սուրէնեան Աւետիս էֆ. որ Նար-Պէյ սրբազանի հրաժարագրոյն ժողովոյ վճռաբանութեան ենթարկուելուն ապօրինաւորութիւնը յայտնելով ըսաւ թէ՝ «եթէ այս վճռաբանութենէն վերջ, մեր քուէներովը ընդունենք Նար-Պէյ սրբազանի հրաժարականը, անհերք է, որ յարգ կատարուած ընտրողական գործողութիւնք իբրև չեղեալ պիտի նկատուին, որ բոլորովին հակառակ է սահմանադրութեան օրինաց, որոյ անթերի գործադրութիւնը ստանձնած է ժողովս առաջի կայս. կառավարութեան և Ազգին. Թէև սահմանադրութիւնը որոշապէս չյայտարարեր թէ այսպիսի պարագայի մը մէջ երբ ընտրելիներէն մէկը հրաժարի ինչ ընելու է, սակայն կայս. կառավարութենէն եկած Թէզքէրէն հրահանգ կուտայ շարունակել համեմատականի մնացեալներու ընտրութիւնը և զօր չեղեալ համարելով՝ ի նորոյ ընտրութեան ձեռնարկելը կայս. կառավարութեան անհնազանդութիւն ըսել ըլլալով, չեմ յուսար որ Ատենապետ էֆ. եւս ներէ այսպիսի ձեռնարկութեան մը. և եթէ երբէք ի գործ դրուին այդպիսի օրինազանցութիւնք յուէտ կը բողոքեմ յանուն իմ և գաղափարակից երեսփոխանացս»: Սուրէնեան էֆէնտիի ատենախօսութենէն վերջ քառորդ ժամու մը համար Ատենապետը փակեց Ատեանը:

* * *

Ժամը 7-ին վերստին բացուեցաւ ատեանը և հետզհետէ խօսք առնելով Յ. Գուրգէն, Մ. Ջերագ, Գ. Ղազարոսեան, Ս. փաշա, Ռ. Պէրպէրեան տեարք թեր ու դէմ կարծիք յայտնեցին Նար-Պէյ սրբազանի հրաժարականին և համեմատականի մնացած ընտրութեան շարունակուելուն և կամ առ ոչինչ համարուելով ի նորոյ ընտրութեան ձեռնարկուելու մասին. Տեարք Նուսուփեան, Նորատունկեան և Մերճանեան առնելով հրաժարականին ընդունելուն՝ նոյն իմաստով 48 երեսփոխաններէ ստորագրեալ բանաձեւ մը քուէի դրուելը առաջարկեցին. նոյն միջոցին ներկայ եղող երեսփոխաններէն չորսն եւս ստորագրեցին 48 երեսփոխանաց ստորագրած բանաձեւը. սակայն Նորատունկեան Գաբրիէլ էֆ. ուրիշ բանաձեւ պատրաստած ըլլալով վերջինեաւ 52 երեսփոխանները այս երկրորդ բանաձեւին քուէի դրուելը առաջարկեցին, ապա Սուրէնեան էֆ. առ Ատենապետն ըսաւ.

—Տէր Ատենապետ. քանի որ երեսփոխան տեարց շատերը քուէ տալ կը պատրաստին և քանի որ նուաստս ալ ընդդիմադիր կուսակցութեան կողմը կը գտնուիմ, ըստ ընկալեալ օրինաց համայն ժողովոյ վերջին անգամն ըլլալով ինձ խօսք տալնիդ կը խնդրեմ:

Ատենապետ խօսք տուաւ և երբ Սուրէնեան էֆ. բեմէն խօսիլ սկսաւ երեսփոխանք քուէ՜ քուէ՜ աղաղակելով խեղդեցին ատենաբանին ձայնը և վճռաբանութեան փակուելը քուէի դրուելով մեծամասնութեան կողմէ ընդունուելէ վերջ, երբ կարգն եկաւ բանաձեւը քուէի դրուելուն, Ատենապետ Մ. էֆ. Մելիքեան, օրինական դիտողութեան մը համար խօսք առնելով, Նորատունկեան էֆէնտիի բանաձեւին մէջ եղած անմիջապէս նոր քուէարկութեան բառին դէմ տխտողութիւն յայտնեց թէ՝ «այս օրուան օրակարգին մէջ նոր քուէարկութեան մասին բան մը չէ գրուած, և միանգամայն 20-ի չափ բացակայ երեսփոխանք համեմատական քուէարկութեան համար ղրկած են իրենց քուէները և ոչ նոր ընտրութեան. արդ բացակայ երեսփոխանները իրենց ընտրողական իրաւունքէն զրկել օրինաց և արդարութեան բոլորովին հակառակ է:

Ասոր վրայ երեսփոխանաց մէջ մեծ աղմուկ ծագեցաւ և Նորատունկեան էֆ. անմիջապէս բառը աւրելով, բանաձեւը քուէի դրուեցաւ և Մէգպուրեան, Սուրէնեան, Պէրպէրեան, Ղազարոսեան, Յ. Խըթիւճեան էֆէնտիները և Ստեփան փաշայի ու այլ երեսփոխանաց բարձած բողոքին հակառակ մեծամասնութեամբ ընդունուեցաւ ժողովոյ կողմէն: Յետ որոյ անմիջապէս նոր քուէարկութիւն խնդրուեցաւ, և թէև տասնէ աւելի երեսփոխանք ժողովէն մեկնեցան, սակայն պատրիարքական նոր ընտրութիւնը անմիջապէս սկսելով հետեւեալ արդիւնքն ունեցաւ.

Թիւ ժողովոյ նստին ներկայ եղող երեսփոխանաց	95
Արդիւնք քուէարկութեան	քուէ
Խորէն սրբազան Աշըգեան	66
Բարթուղիմէոս սրբ. Չամչեան	7
Խորէն սրբազան Նար-Պէյ	1
Սպիտակ քուէ (որոյ վրայ անուն չէր գրուած)	2
«Ոչ կարեմք լուծանել զօրէնս» գրուած	1
Բողոքելով քուէարկութեան չմասնակցող	18
Գումար	95

Ատենապետ Արմաշու վանուց վանահայր Աշըգեան Խորէն սրբազանի քուէից առաւելութեամբ Կ. Պոլսոյ Հայոց պատրիարք ընտրուիլը ծանուցանելով ժողովը փակեց ժամը $9^1/_2$ ին. երեսփոխաններէ ոմանք կառավարութեան մատուցուելիք մ ա զ պ ա թ ա ն ստորագրելու համար 'ի պատրիարքարան եկան և այսպէս հապճեպով մը վերջացաւ բաւական ժամանակէ ի վեր գրեթէ ամեն մտքերն զբաղեցնող պատ. խնդիրը:

(Մնացածը միւս անգամ)

---

*) Այդ բանախօսութիւնը ընդարձակ լինելով չենք հրատարակում այս անգամ:

Խմբ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՖՐԱՆՍԻԱ. — Հոկտեմբերի 13-ին Փրանսիական մինիստրների խորհուրդը տեւեց մինչեւ կէս օր: Նիստի մեծ մասը նուիրուած է սահմանադրութեան վերաքննութեան մասին պ. Ֆլօկէի կազմած օրինագծի քննութեան: Վերջ ի վերջոյ օրինագծի քննութիւնն հաւանութիւն է գտնում և վճռւում է ներկայացնել պատգամաւորների ժողովի քննութեան: Առաջարկութեան հիմքի բացատրութեան մէջ ասուած է, որ ներկայ կաբինէտը —գլխաւորապէս վերակազմութեան կաբինէտ է, որ դիմում է հասարակապետականներին միացնելու ոչ թէ statu quo-ի հիման վրայ, այլ բարեփոխութիւնների: Կաբինէտը կարծում է, որ հարկաւոր չէ բերդի մէջ մնալ, այլ հարկաւոր է դուրս գալ հասարակապետութեան թշնամու վերայ յարձակում գործելու համար: Մինիստրների խորհրդի կարծիքով, Փրանսիական հասարակութիւնների շահը պահանջում է կոնգրէս կազմել, որի միջոցով կառավարութիւնն հնար ունենար, մի անգամ վրճռած լինելով հասարակապետութիւնն պաշտպանել, իւր հաւատակիցները պարգեւել իւր հակառակորդներին, որոնք հետեւելով ընդհանուրի ձայնին, նոյնպէս պահանջում են սահմանադրութեան վերաքննութիւնը, բայց բոլորովին այլ նպատակներով: Մինիստրութիւնն յայտարարեց, որ նա վերաքննութիւն պահանջում է պարլամենտական պարապմունքները հեշտացնելու համար, նոյնպէս և երկրի ցանկացած և պատգամաւորների ժողովի քուէրակութեամբ ընդունած բարեփոխութիւններն, ինչպէս օրինակ, զինուորական օրէնքը չյետաձգելի կամ չմերժելի սենատի կողմից: Խօսքը սենատի ոչնչացման մասին չէ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** Ամերիկայում ներկայումս գործում են էլէկտրական 34 երկաթուղիներ, խւրաքանչիւրը 7 կիլոմետր տարածութեան վրայ: Էլէկտրական վագոնների թիւը հասնում է 223-ի:

*** Միացեալ-Նահանգների անասունների կանայք աշխատում են ընդունել տալու մի օրէնք, որի զօրութեամբ իւրաքանչիւր ազատարդ պարտաւոր է չորս շաբաթուայ ընթացքում, եթէ նա ամուսնացած չէ և մտադիր է ամուսնանալու, յայտնել օրիորդին կամ այրի կնոջը, անդեօր «լուրջ մտադրութիւն» ունի թէ ոչ: Նրանք պնդում են, որ չորս շաբաթը բաւական է «սիրոյ առարկայ»-ին ճանաչելու համար, մինչդեռ տեղական երիտասարդները բողոքում են և պահանջում են 8 շաբաթ ժամանակամիջոց:

* * *

«Պէրալ» նաւը.— Սպանիայում մտերքս ծով իջեցրին «Պէրալ» անունով մի նաւ: Այդ նաւն ամենեւին նման չէ մինչ այժմ այդ ձեւով եղած նաւերին: Նայելով նրա նկարագրութեան, «Պէրալը» մեզ մի փոքր յիշեցնում է յայտնի վիպասան Ժիւլ-Վէռնի «Nautilus»-ը: Նա շինուած է կէօրակում սպանիացի խոահակ Պէրալի նախագծով: Այդ նաւը, որ թեյ փաթաթած իլիկի է նմանում, 22 մետր երկարութիւն ունի և մօտ 3 մետր լայնութիւն: Նա շարժւում է, $10^1/_2$ մղոն արագութեամբ մի ժամում, էլէքտրական շարժիչներով, որոնց առաջը գտնւում են ինքնաշարժ տօրպեդներ. բայց այդ, նա կարող է իւր սուր ծայրով վնասել թշնամու նաւի ջրի մէջ սուզուած մասը: Մինչ հորիզոնական դիրք բռնելով, նա մինչև երկու օր կարող է մնալ ջրի տակ: «Պէլալ»-ը արժէ 200,000 պեսէտ (մօտ 100,000 ռուբլի) և նրա հնարողը ձեռնարկել է այդպիսի մի նոր, մեծ նաւի շինութեան, որ կարող է սպառնալ ամբողջ նաւատորմղի:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՎԻԵՆՆԱ, 11 հոկտեմբերի.—Պարլամէնտական շրջաններում հաստատում են, որ աւստրիական կայսրի իբր Բօհէմիական թագաւոր և թագադրելու խնդիրը լուրջ խորհրդակցութեան առարկայ է դարձել և լոյս ունին նրա աջող լուծմանը:

Միլան թագաւորը, Վիեննայում եղած միջոցին, մտադրութիւն է յայտնել գահից հրաժարուելու:

ԿԻԵՎ, 12 հոկտեմբերի.—Ռուս շաքարագործների համագումարի երէկուայ նիստին որոշուած է,—1888 և 1889 թուերի շաքարի քանակի աւելորդի արտահանութիւնն շտապեցնել, առ 1-ն յունվարի 1889 թուի արտահանել 80% և առ մէկն մայիսի 20%. լրացուցիչ արտահանութիւնը սահմանել 6% իւրաքանչիւր գործարանի համար որպէս արտադրութեան չափ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

11 Հոկտեմբերի:

Լոնդօն	93,60 ր., 93,10 ր., 93,50 ր.
Համբուրգ	45,80 ր., 45,60 ր., 45,80 ր.
Պարիզ	36,75 ր., 36,50 ր., 36,75 ր.
Պօլուիմպերիալ	7 ր. 55 կ. սակ.
Մաքս. կուպօն	151 ր. — կ. սակ.
Արծաթ	1 ր. 15 կ. գն.
Բօրսային զիս. 7 և 8%	
Պետակ. բանկի 5% տոմս.	
1-ին շրջանի	98 ր. 12 կ. սակ.
2-րդ	97 ր. 75 կ. սակ.
3-րդ	97 ր. 25 կ. սակ.
4-րդ	97 ր. 37 կ. սակ.
5-րդ	97 ր. 38 կ. սակ.
Վերջին 4% փոխառութիւնը	— ր. — կ. գն.
100 և 1000 ապեւլեան փոխառութեան 5% տոմսեր,	
1-ին շրջանի	96 ր. — կ. գն.
2-րդ	95 ր. 87 կ. գն.
3-րդ	95 ր. 87 կ. գն.
Առաջին 5% ներքին փոխառութեան տոմսեր	261 ր. 50 կ. սակ.
2-րդ	237 ր. — կ. սակ.
5½% բէնթեր	102 ր. — կ. ծախ.
Ոսկէ բէնտ	170 ր. 50 կ. գն.
Թիֆ. քաղ. վարկի բնկեր. օբլիգ.	— ր. — կ. սակ.
Պետական բանկի 4% տոմսեր	82 ր. 12 կ. սակ.
Երկաթուղու բէնտ	95 ր. 62 կ. գն.
Ազնուակ. հող. բանկի գրաւաթղթերը	96 ր. 37 կ. սակ.

Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է:

Խմբագիր-Հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՐԿԱՒՈՐ Է

«Նոր-Դար»-ի խմբագրութեան համար ՑՐԻՉ-ԾԱԼՈՂ:

Պահանջւում է անպայման, գրագէտ: Պէտք է ցրիչ-ծալողը լինի ամուրի:

Ցանկացողները թող դիմեն «Նոր-Դար»-ի խմբագրատան գրասենեակը, որ գտնւում է պօստ-հեռագրատան դիմաց, Ծուբինովի դեղատան մօտ:

SIROP DE RAIFORT IODÉ
DE GRIMAKLT & C-e
Pharmaciens à Paris
autorisé en Russie
ՌԵՖՕՐ ԻՕԴԷԻ ՍԻՐՕՊ
Պարիզի Գրիմօ և ընկ. Դեղավաճառների

Այս դեղը գործածւում է բոլոր տարիքի, ի մէջ երախաների հիւանդութիւնների դէմ ձկան իւղի և անտիսկօրբիկ (противоцынготный) սիրոպի տեղ և նշանաւոր արդիւնքներ է տալիս:

Երախայից վզի այլեւայլ ուռուցքները, խուլը և մարմնի, գլխի և երեսի վրայ երևցած բազմատեսակ վէրքերը բժշկելու համար սրանից աւելի ազդու դեղ չկայ: Միևնոյն ժամանակ բժշկւում է մարմնի մեղկութիւնն ու գունատութիւնը և տալիս է երախաներին իրենց բնական զուարթութիւնն ու արթնութիւնը: Սա անգին դեղ մէ, ծծող երախայից մարմնի և գլխի վրայ երևցած վէրքերը բժշկելու և արիւնը մաքրելու համար:
Ծախվում է Պարիզ, Վիվիէն փողոց № 8. Տ.
(M.) գ. 27—7

Ցանկանալով հրատարակել իմ եղբայր՝ հանգուցեալ ինժեներ Պետրոս Պետրոսեանի կազմած և անտիպ մնացած «Հայերէնից—Ռուսերէն» բառարանը, որի տպագրութիւնը ահագին ծախք է պահանջում, դիմում եմ գլխաւորապէս հանգուցեալի ընկերներին, խնդրելով, որ օգնեն ինձ այդ կարևոր ձեռնարկը բաժանորդագրութեամբ լոյս ընծայելու:

Բաժանորդագինը մինչև լոյս ընծայելը

Կը լինի 4 ր., լոյս տեսնելուց յետոյ 6 ր.: Բաժանորդ գրուել կարելի է Թիֆլիսում «Կենդրոնական» և «Միքայէլեան» գրավաճառանոցներում և ինձ մօտ: Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետևեալ հասցէով. Тифлисъ, Артемію Петросянцъ, Михайловская улица, домъ Мадера, № 107.

Յ. Պետրոսեանց
(Զ.) 3—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Սամուէլ Սմայլս
ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ
Գերման. թարգմ.
ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ
Գինն է 1 ր. 50 կ.

Նոյն թարգմանչի

Շմիտ, Բենիամին Ֆրանկլին, 2 տիպ	40 կ.
— Գէորգ Վաշինգտոն 2 տիպ	60 »
— Համերի Իլխանը, պատկերազարդ .	1 ր. — »
— Համերի Ռելսանկանը, պատկերազարդ	1 ր. 20 »

(Ճանապարհի ծախքը թարգմանչի վրայ է):

Վաճառւում են թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Маріино Анановское училище.

ՀԱՐԿԱՒՈՐ Է

ՈՒՍՈՒՑԻՉ գիւղական, նոր բացուող, միդասեան ուսումնարանի համար:

Պայմաններն են՝ ռոճիկ 200 րուբլի, սենեակ, վառելիք, ծառայ, ճանապարհածախս: Մանրամասնութիւնները իմանալ կարելի է Մ. Մուրադեանից. Փոքր Օրբէլեան փողոց, տուն Խարազեանցի, բնակարան Օքրոեանցի:

6—3

ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Նովօռոսիյսկի երկաթեղէնութեան Բաթումի Օդեսայի և Կ. Պօլսի մէջ:

Բաթումից գնում է

Երեքշաբթինները.—Կէս օրից յետոյ ժամը 4-ին, ուղիղ գծով, մտնում է Սուխումի և Նովօռոսիյսկի նաւահանգիստները:

Հինգշաբթինները.—Կէս օրուայ ժամը 4-ին, ուղիղ գծով, Նովօրոսիյսկի և Կերչի վրայով:

Շաբաթ օրերը.—Երեկոյեան ժամերին, շրջանառու ընթացքով, բոլոր նաւահանգիստները պատահելով:

Երկուշաբթինները.—Երեկոյեան արագաշրջանեան գնացքով Կ. Պօլիս:

Բաթում գալիս է

Երկուշաբթի — Առաւօտը, Օդեսայից, ուղիղ գծով՝ Կերչի և Սուխումի վրայով:

Չորեքշաբթի — Առաւօտը Օդեսայից, ուղիղ գծով, Կերչի և Նովօրոսիյսկի վրայով:

Ուրբաթ.—Երեկոյեան, Օդեսայից, շրջանառու ընթացքով:

Կիրակի օրերը.—Առաւօտը Կ. Պօլսից:

Փօթիից գնում է Բաթում

Երեքշաբթինները.—Առաւօտեան ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան ուղղակի շոգենաւին միանալու, որ մտնում է Սուխում:

Ուրբաթ—Երեկոյեան կամ գիշերը, շրջանառու Ղրիմ-Կովկասեան Բաթում գնացող նաւը նաւահանգիստ գալուց յետոյ:

Շաբաթ օրերը.—Առ. ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան և Ռումէլիա-Անատոլեան շրջանառու շոգենաւերին միանալու:

Բաթումից գնում է Փօթի

Չորեքշաբթի և կիրակի օրերը.—Նաւի գալու ժամը որոշում է Բաթումի նաւային գործակալութիւնը՝ նաւը Փօթիից գալուց յետոյ:

Բայց այդ, ամէն շաբաթ Օդեսայից Ղրիմ-Կովկասեան նաւահանգիստներից գալիս են Փօթի որոշեալ ժամանակներում երթևեկող ապրանքաբեր-մարդատար նաւեր. չորեքշաբթի օրերը, լուսաբացին, և գնում են ուրբաթ առաւօտները: Նովօռոսիյսկի վրայով շաբաթ օրերը երեկոյեան Սեվաստոպոլ և Բաթում գալիս են նոյնպիսի նաւեր, որոնք Փօթի գալիս են ուրբաթ լուսաբացին և հեռանում է շաբաթ օրը երեկոյեան, վերադառնում է առանց Բաթում մտնելու Սեվաստոպոլի և Օդեսայի վրայով գալիս է չորեքշաբթի երեկոյեան:

ՓՕՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐԻ

երթևեկութիւնը Վրացական-զինուորական Ճանապարհով

1888 թ. մայիսի 15-ից մինչև նոյեմբերի 15-ը:

Թիֆլիսից դուրս է գալիս

Հինգ հոգու տեղ ունեցող կառքերը առաւօտեան ժամը 9-ին, Մլէթի կայարանում գիշերելով հասնում է Վլադիկավկազ միւս օրը երեկոյեան ժամը 8-ին:

Նոյնպէս դուրս է գալիս առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Գուդաուրի կայարանում և Վլադիկավկազ հասնելով, միւս օրը ցերեկուայ ժամը 5-ին:

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսը դուրս է գալիս ցերեկուայ ժամը 4-ին, առանց գիշերելու, միւս օրը, երեկոյեան ժամը 7-ին. հասնում է Վլադիկավկազ:

Նոյնպէս դուրս է գալիս կէսօրից յետոյ ժամը 5-ին և առանց Ճանապարհին գիշերելու Վլադիկավկազ հասնում է միւս օրը ժամը 8-ին երեկոյեան:

Վլադիկավկազից

Հինգ հոգու տեղ ունեցող կառքերը դուրս են գալիս առաւօտ. ժամը 9-ին, գիշերում են Մլէթի կայարանում և միւս օրը երեկոյեան ժամը 8-ին հասնում են Թիֆլիս:

Նոյնպէս առաւօտեան ժամը 7-ին դուրս են գալիս և գիշերելով Պասանաուր կայարանում, միւս օրը ժամը 6-ին երեկոյեան հասնում են Թիֆլիս:

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսները դուրս են գալիս ցերեկը, ժամը 4-ին ճաշից յետոյ, առանց գիշերելու՝ միւս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում են Թիֆլիս:

Նոյնպէս դուրս են գալիս երեկոյեան ժամը 5-ին և առանց Ճանապարհին գիշերելու, միւս օրը հասնում են Թիֆլիս երեկոյեան ժամը 9-ից 50 ր. անց.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Երթևեկութիւն «Թիֆլիս» կայարանում

Գնում է

Բաթում, պօստային.	8 ժ. 49 ր. առ.
Բագու, ,,	10 ժ. 46 ր. եր.
Սուրամ, ապ. մար. գն.	3 ժ. 21 ր. ց.
Աղստաֆա, խառն գն.	8 ժ. 20 ր. առ.

Գալիս է

Բաթումից, պօստ.	10 ժ. 15 ր. եր.
Բագուից, »	8 ժ. 6 ր. առ.
Սուրամից, ապ. մարդ.	8 ժ. 24 ր. առ.
Աղստաֆայից, խ. գն.	8 ժ. 18 ր. եր.

ԵՂԲԱՐՔ ԴՕՎԼԱԹԵԱՆՆԵՐ
«Կօմիսիօներութիւն Անդրկովկասում»
ՏՂԱՄԱՐԴԿԵՐԱՆՑ ԵՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆ.

Սեպտեմբերի 24-ին բացուած է նոր ՊԱՀԵՍՏ, որ գտնւում է Թիֆլիսում, Գոլովինսկի պրոսպեկտի վրայ, Միրիմանովի տանը, Նահանգական դատարանի տակ, պալատի դիմաց:

I. բաժանմունքը Թիֆլիսում, Գոլովինսկի պրոսպեկտի վրայ, Մէրզօևի տանը (նախկին Բէլօյի),—II բաժանմունքը Բագուում, Քոլանթարեանի պասաժում, №№ 11—12.

Մեր ֆիրմայի երկու բաժանմունքներումն էլ միշտ կան մեծ քանակութեամբ տղամարդկերանց և երեխաների պատրաստի հագուստներ, որոնք անմիջապէս ստացւում են ամենալաւ գործարաններից:

Հենց նոր են ստացուել մեծ քանակութեամբ և ծախւում են չափաւոր գներով տղամարդկերանց և երեխաների աշնան և ձմեռուայ պատրաստի հագուստներ: 25—7

ԱՐԴԷՆ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է
ԵՒ
ՇՈՒՏ ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ

ԳԷՈՐԳ ՉՈՒԲԱՐԻ
ԵՐԳԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ.

1) ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐ
2) ՄԻ ՎԱՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
3) ՄԱՀՏԵՍԻ-ՍԱՐԳԻՍ
4) ՑԻՄԱՐ ՈՋԽԱՐՆԵՐ
5) ՄՈՌԱՑՈՒԱԾ ՇՕՆ
6) ՆԱ ՕՊԱՍՈՒՄ Է ԴԵՌ

Գրքոյկի գինն է 1 ր., ճանապարհածախսով—1 ր. 20 կ.

ա) Ցանկացողները դիմում են Թիֆլիս, «Նոր-Դար» լրագրի խմբագրութեանը և կամ

բ) Հեղինակին այս հասցէով. Москва, студенту-юристу Г. И. Чубарову — до востребованія

(Ի.) 20—3

ԶԷՅԹՈՒՆՑԻՆԵՐԻ ՕԳՏԻՆ
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
„ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ“
Դաշնամուրի համար

1) Vivace
2) Հայոց եղանակ.
3) Բաշիբոզուկի եղանակ.
4) Յարձակումն.
5) Հայոց եղանակ.
6) Թիֆլիսի զուռնա.
7) Քրդի եղանակ.
8) Նախիջևանի ջրկիրների եղանակ
9) Իջաս պարսկական.
10) Պարսկական եղանակ.
11) Մոլդաւական պար.

Գինն է 1 ռուբլի: Ճանապարհածախսի համար պէտք է վճարել 11 կոպէկ մարկայով:

Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան, Թիֆլիսում:

ВОСТОЧНЫЕ МОТИВЫ
для фортепіано

1) Vivace
2) Армянскій мотивъ.
3) Башибузукскій мотивъ
4) Нападеніе.
(5 Армянскій мотивъ.

MOTIFS ORIENTEAUX
Pour le Piano

6) Тифлисская зурна.
7) Курдынскій мотивъ.
8) Мотивъ Нахичеванск. водовозовъ.
9) Иджасъ, Персидскій мотивъ.
10) Персидскій мотивъ.
11) Молдавскій танецъ.

Цѣна 1 руб. и 11 к. (марками).

Можно получать въ ред. «Норъ-Даръ», въ Тифлисѣ.

(Խ.) X—67

Дозволено цензурою. Тифлисъ, 12 го Октября 1888 г. Տպարան Կովկաս լրագրի գրասենեակի: Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова